

❖

**ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ԱՏՈՐՈՂՅԱԼԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՅՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ» ԵՐԿՈՒՄ**

Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ, ՄՈՂԱՄՍԱԴ ՄԱԼԵԶ-ՄՈՂԱՄՍԱԴԻ (Իրան)

ԵՆԹԱԿԱ

Ենթական, որը ստորոգյալի հետ նախադասության գլխավոր անդամ է, «Եղծ աղանդոց»-ում արտահայտվում է՝

ա) **Գոյականով**, որը իբրև ենթականի հիմնական արտահայտություն, կարող է լինել անձի կամ իրի անուն, երևույթի կամ հասկացության անվանում: Օրինակ՝ Յայնժամ սկսան Որմիզդ և Արհմնն առնել արարածս (81): Եւ ջուրք զհող երկրի ողողանեն և ապականեն. և երկիր առանց ջուրք պատտի և խորխորի (9): Արդարև իսկ չարիքն որ լինին՝ ի տարակուսի կացուցանեն զբազումս (16): **Դատաւորն** զգողն և զաւագակն պրկէ և քերէ՝ վասն զվնասակարութիւնն ի միջոյ բառնալոյ (43): **Ծուխ և շոգի երկրի՝** և բոց հրոյ, քանզի թեթևք են, ի վեր կողմն զնան (133): **Բայց թէպէտ և հեթանոսութիւնն** եմուտ յաշխարհ, այլ աստուածապաշտութիւնն ոչ ամենևն պակասեաց (160): **Զի սպանութիւնն** չէ անձն ինչ, և ոչ շնութիւնն անձն ինչ է (21):

բ) **Դերանունով**. Ես տնկեցի զքեզ որթ վայելուչ (120): **Զգոյր ինչ ժամանակակից Աստուծոյ** (167): **Զի սա հանապազ առնէ մարդիկ** (177): **Այդ այնմ աման է**, յորժամ ի քարանց որ շինուածս առնիցէ (22): **Ուստի ոչ ինքն վայելեացէ**, և ոչ այլոց զգիտութիւն արուեստին ցուցանիցէ (165): **Թէպէտ և զիջանելն որ ոչ տեսանէր**, սակայն զհամբառնալն ամենեքեան տեսանէին (152): **Եւ զեղեամն յերկինս ո՞ ծնալ** (148):

գ) **Փոխանուն ածականով**. Եւ ընդէ՞ր սուտ և մարդասպան անուանիցէ չարն (127): **Բայց թէ արգելուցու զնա օտարն** (189): **Անարգեն շատք և անպատուեն** (12): **Եթէ փրկեաց զնոսա, վերջինքն զի՞ գործիցեն**, որ ի նոյն դժոխս անկանելոց են (190): **Զի մի՛ արդարն յարդարութենէն ծուլացի**, և մի՛ մեղաւորն միշտ ի մեղսն կայցէ (59):

դ) **Փոխանուն թվականով**. **Մին ասէ՛** թէ ի մերում զեղ ծովացոյ զկով գործեաց (70): **Եւ երկոքին ի դիպաց արգասիք են** (83): **Այլ ի քէշին մի են երկոքեան** (81):

ե) **Ենթականական դերբայով**. Առաւել ևս յանդիմանէ զնա կառավարիչն օրինաց (207): **Եւ ոչ արգահատէր նմա արարիչն և ներէր յանցմանն** (52): **Բայց եթէ նմա նմանող չկարէր լինել**, գոնեայ հիղեայն լիցի նմանող (157):

զ) **Անորոշ դերբայի որոշյալ առումով**. **Եւ ոչ յետոյ ծնանի ի նմա կամելն** (163): **Զբարկանալն չսպանանելոյն ոչ եթէ հակառակ ինչ է**, այլ կարի քաջ միաբան (193):

Ուղղական հոլովից բացի ենթական դրվում է՝

ա) **Սեռական հոլովով**, երբ ներգործական սեռի բայերը գործածվում են անցյալ դերբայով. **օրինակ՝ Եւ տեսեալ օրինացն աստուծոյ՝ թէ զեղեցիկ է աշխարհս, խորհեցաւ առնել ի սմա մարդ** (169): **Եւ ծանուցեալ Որմնզդի զխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արհմենին** (80): **Քանզի չէ իւր արարեալ**, և թագաւոր չեղև (88): **Զի իւրոյ արարչին յառաջագոյն պատուիրեալ էր նմա** (52):

բ) **Տրական հոլովով**, երբ անորոշ դերբայը գործածվում է դիմավոր բայի նշանակությամբ. **օրինակ՝ Իսկ ոմանք ի հրոյ էութենէ համարին ունել սմա զբնութիւն** (143): **Յուշկապարկաց ասեն բնակել յաւերակսն** (69): **Ապա ոչ այժմ թագաւորել է նմա**, և ոչ վախճանի (87): **Բայց մեզ մի լիցի այնպիսի ինչ ասել** (26): **Ուստի և լինիցի նոցա զճշմարիտն ուսանել** (17):

¹ Փակագծերի մեջ առնված թվերը նշում են «Եղծ աղանդոցի» (Թիֆլիզ, 1914) համապատասխան էջերը:

Տրական հոլովով է դրվում նաև եղանակիչ բայերի մոտ ենթակայի իմաստ արտահայտող բառը. ինչպես՝ Ծախել պարտ էր երկրի՝ և ոչ սնուցանել (46):

Իբրև հունաբանություն՝ անորոշ դերբայի հետ երբեմն գործածվում է հայցական հոլովով ենթակա. օրինակ՝ Ջի գաստուած արարիչ ասել այնպիսի իրաց անպատշաճ է (15) = փոխանակ՝ Անպատշաճ է ասել, թե Աստուած արարիչ իցե այնպիսի իրաց՝: Ուստի գարուեստն յոչընչէ ի մարդիկ պատշաճեալ հարկ է ասել (20)՝ Հետևաբար պետք է ասել, որ արվեստը մարդուն հարմարեցված է ոչնչից:

ՄՏՈՐՈԳՅԱԼ

Ստորոգյալն ըստ կազմության լինում է պարզ և բաղադրյալ: Միայն խոնարհված բայով արտահայտված ստորոգյալը կոչվում է պարզ, որի արտահայտման միջոց են ծանայում բայի բոլոր եղանակների ժամանակաձևերը: Ըստ այսմ՝ իբրև պարզ ստորոգյալ հանդես են գալիս՝

ա) Բայի պարզ ժամանակները, որոնք կազմվում են բայահիմքից՝ համապատասխան դիմային վերջավորություններով. օրինակ՝ Թողու (38), առնոյր (31), ոչ հասանելին (49), առաքինեցուցանել (128), մի՛ հաւատար (211), յայտնեաց (80), խնդրիցէ (74), երկեայց (65), հնձեցեր (204), ախորժեսցիք (117), արարէք (84), բժշկեսցի՛ր (173) և այլն:

բ) Բաղադրյալ ժամանակները, որոնք կազմվում են անցյալ կամ ապառնի դերբայներով և են, լինիմ օժանդակ բայերի խոնարհված ձևերով. օրինակ՝ ելեալ է (60), արարեալ էր (127), պնդեալ էին (108), արգելեալ իցէ (74), նզովեալ լիցի (109), լինելոց է (55) և այլն: Բաղադրյալ ժամանակների կազմությանը մասնակցում են նաև կայ և ունիմ բայերը, ինչպես՝ փակեալ կայ (133), նկարեալ ունէր (166):

գ) Հարադրական բայերը, որոնք կազմված են հարադիր + բայական բաղադրիչ կաղապարով. ինչպես՝ զմտաւ ածել (216), ակն ունել (163), ի մտի խորհել (88), ազդ առնել (115), ի պաշտօն առնուլ (28), ձեռն արկանել (190) և այլն:

դ) Ջուգադրական բայերը, որոնք սովորաբար ձևավորվում են երկու բայական բաղադրիչներով, ինչպես՝ եկն եկաց (80), գան մտանեն (201), ե՛րթ մատո՛ր (193) և այլն:

Բաղադրյալ է կոչվում այն ստորոգյալը, որն իր կազմում ունի ստորոգելիական վերադիր (ստորոգելի) և հանգույց: Բաղադրյալ ստորոգյալն իր հերթին լինում է երկու տեսակ՝ բայական և անվանաբայական: Բաղադրյալ բայական ստորոգյալը կազմվում է դիմավոր բայ + անորոշ դերբայ կաղապարով, որը չափազանց գործուն է «Եղծ աղանդոց»-ում: Այսպես՝ Մեք ոչ հրամայենք անարգել (10): Ջի յորժամ ի խոզից երամակն մտաբերեցին մտանել, ոչ կարացին մտանել (61): Եւ յորժամ գՅորք կամեցաւ փորձել սատանայ, ոչ իշխեաց ժտել (ն.տ.): Չկարէ յայտ երթալ ասել (44): Ընդ այնր պատիժ չպարտի կրել (37): Մեք դարմանովքն կարենք բժշկել (125): Եւ արդ ու՞ր իշխիցեն շշմջել (64):

Անվանաբայական բաղադրյալ ստորոգյալը, որի վերադիրն արտահայտվում է տարբեր խոսքի մասերով կամ գոյականաբար գործածված բառով, իսկ հանգույցը՝ են, լինիմ բայերի խոնարհված ձևերով, «Եղծ աղանդոց»-ում հանդես է գալիս հետևյալ կաղապարներով.

ա) Գոյական + հանգույց. Ջջլու միս ուտել՝ դարման է մարմնոյ (47): Ջի հող էիր, և ի հող դարձիր (51): Ո՛չ ապաքէն մարդկան մտաց բաջաղանք են (85): Առասպելք են և սնտի պատմութիւնք (98): Ապաքէն ուրուք բախտ էր (91):

բ) Ածական + հանգույց. Եթէ ասիցեն՝ եթէ բարեաց արարիչ հարուստ է (50): Ջի արդար են իրաւամբք քան զքեզ (173): Թէ վասն զի մշունչեմաւոր էր՝ փառաւոր էր (83): Եթէ այնչափ գթած էր (18): Իմ որդին անուշահոտ և լուսաւոր է (95): Քաղցր են և բարեբար ամենեցուն (44):

գ) Թվական + հանգույց. Եւ ինքն մի է (142): Յայտ է թէ չէին երկուքն միայն անարարք (24):

դ) Գերանուն + հանգույց. Այս են կրօնք փիլիսոփայից (143): Ջի զեղեցկութեանն տուիչ ինքն է (8): Ուստի՞ է խաւար (14): Եթէ ինքնին այնպիսի չէր (37): Ջի՞նչ է այդ՝ գոր

՝ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 39:

ասաց Աստուած (54): Ջի ինքեանք են պատճառք առնելոյ և չառնելոյ (21): Արդ ո՞վ էր նա, որ այնչափ մեծամեծս կարաց գործել (187):

Ե) Մակբայ + հանգույց. Քանզի նիւթոյ անուն ի նոցա ի մրոր մերձ է (77): Ջի ոք ուրեք չէր (94): Եւ լուսին, ասեն. ի ներքոյ է քան զարեցակն (140): Եւ երկինք, ասեն, որչափ ի վեր են՝ դոյնչափ ի խոնարհ են (ն.տ.):

զ) Դերբայ + հանգույց. Արեգակն թէ բարի է. և առանց օդոյ խառնուածոյ այրիչ և ցամաքեցուցիչ է (8): Ի յայտնի ինչ ժամանակի սպանող է (47- 48): Չէ ցանկացօղ սեղանոյն Քրիստոսի (213): Այլ խրատ է և յօժարեցուցանէ զմարդն, զի լաութեանցն ցանկացող լիցի (30-31): Ջի նոքա կերպարանողք են (82):

Անվանաբայական ստորոգյալի հանգույցն արտահայտում է նաև միադիմութիւն՝ վերադրի հետ դիտվելով իբրև միադիմի բայ. ինչպես՝ յայտ է (12), պիտոյ է (15), հարկ է (23), պարտ էր (84), մարթ էր (34) և այլն:

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ենթական ու ստորոգյալը, գտնվելով ստորոգումային կապակցության մեջ, գրաբարում մեծ մասամբ համաձայնում են դեմքով և թվով՝ ի հայտ բերելով նաև համաձայնության որոշ կարգի շեղումներ:

«Եղծ աղանդոց»-ում ամենից առաջ ենթական ու ստորոգյալը դրվում են միևնույն դեմքով և թվով: Օրինակ՝ Մրջիւնն յարևելից յարևմուտս կոյս ընթանայցէ (139): Ոչ ուրեք մտանէ արեգակն (149): Յորժամ լուսինն մթանայցէ՝ նմա զի՞նչ պատահիցէ (151): Առ Սերուբաւ եղև. ասեն, սկիզբն հեթանոսութեան (160):

Հոգնակի ենթական և ստորոգյալը հետևյալ օրինակներում. Եւ մեր ոչ անարգեմք զնոսա, և ոչ պաշտօն մատուցանեմք նոցա (11): Ջի ոչ երբէք տեսաք՝ թէ կովք էշս ծնան (85): Վասն որոյ և մոզքն նախ յազեն, և ապա սպանանեն զանասունսն (155):

Բազմակի ենթակաների ստորոգյալը սովորաբար դրվում է հոգնակի թվով: Այս դեպքում ենթակաները կապակցվում են նաև և՛ ... և՛, թէ՛ ... թէ՛ շաղկապներով: Օրինակներ. Ոչ գայլք և գառիք ի միոջէ արգանդէ ծնանին (92): Ջի եթէ արեգակն և լուսին չև ևս էին լեալ (83): Այլ և վիշապք... և նհանգք կեղծս ի կեղծս լինին (72): Հրեշտակք և դևք և ոգիք մարդկան անմարմինք են (63): Եւ թէ ջուր թէ հուր թէ երկիր թէ օդ, թէ իցեն և թէ չիցեն՝ զայն ոչ գիտեն (11):

Եթե ենթակաները արտահայտվում են եզակի կամ հոգնակի մշանակությամբ անեզական բառերով, ստորոգյալը դրվում է հոգնակի: Օրինակ՝ Ամենայն կառք ի համագզեաց երկվարաց լծին (13): Ջի փառքն ոչ եթէ անձնատր ինչ են, այլ ի յաջողութենէ ուրուք անուանին փառք (83): Ուստի չարիքն յաշխարհ մտին (86): Ջոր գիրք դժոխք կոչեն (191): Եւ քանզի ընդ գրով չեն կրօնքն, երբեմն զայն ասեն, և այնու խաբեն (98-99): Որպէս և օրէնքն ասեն (170):

Եթե ենթական գործածվում է հոգնակի թվով, իսկ ստորոգելիական վերադիրը գոյական կամ ածական է, եւ և լինեն բայերի հանգույցը դրվում է հոգնակի, իսկ վերադիրը՝ թէ՛ հոգնակի և թէ՛ եզակի: Օրինակ՝ Մարմնաւորք էին արդեւք դիքն, թէ անմարմինք (70): Ջի եթէ զազանքն չարի արարածք իցեն (46): Ջի մարդիկ յորժամ լաութեանցն հմուտ լինիցին, յաղթեցեն նմա (40):

Եթե ենթական ունենում է երկու կամ երկուսից ավելի թվական որոշիչ, ոչ միայն ենթական, այլ և ստորոգյալը սովորաբար դրվում են հոգնակի թվով: Օրինակ՝ Որպէս թէ ի միոջէ ի հօրէ երկու որդիք ծնան (78): Ջի ոչ երբեք ի միոջէ աղբերէ երկու բղխմունք ելանեն (84): Եւ ոչ միայն եւթն աստեղքն զնայունք են (148): Երեք մասունքն ի նոսա ուստի՞ իցեն (157):

Եթե ենթական արտահայտվում է այն ցուցական դերանունով, ստորոգյալը խիստ հազվադեպ դրվում է հոգնակի թվով. օրինակ՝ Դիւսացն կերպարանք են այն, և ոչ վիշապաց (75):

Պետք է նշել, որ «Եղծ աղանդոց»-ում ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը բավառության հիմունքով, այսինքն՝ եզակի թվով ենթական հոգնակի ստորոգյալի հետ,

հանդիպում է միայն հետևյալ նախադասության մեջ. Այլ յայտ է թէ մտաց բարբաջանք են աղանդն (175):

Ինչ վերաբերում է «Եղծ աղանդոց»-ում ենթակայի և ստորոգյալի շարահատությանը, ապա կարելի է ասել, որ այն ընդհանրապես ազատ է, այսինքն՝ ենթական դրվում է ստորոգյալից և՛ առաջ, և՛ հետո. սակայն տարածվածը ենթակայի նախադաս կիրառությունն է, որին գուգահեռ Եզնիկը հաճախ ենթական գործածում է ստորոգյալից հետո: Օրինակ՝ Արդ ժտեցոյց (=հանդգնել տվեց) թշնամին գմարդն անցանել զհրամանաւ Աստուծոյ (34): Այլ յանդիմանեն գնոսս և պատերազմացն դէպք (107): Նշելի է, որ նախադասության գլխավոր անդամների այս կարգը համարվում է դասական գրաբարի շարահատության ընտիր դրսևորումներից մեկը:

Р. С. КАЗАРЯН, МОГАММАД МАЛЕК-МОГАММАДИ (Иран) - Способы выражения подлежащего и сказуемого в произведении Езника Кохбацци «Опровержение ересей». - В статье представляются различные способы выражения подлежащего и сказуемого, рассматривается явление согласования главных членов предложения, отмечается, что подлежащее и сказуемое согласуются в основном по категориям лица и числа, и выявляются также различного рода отклонения.